ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐ 2021 թվականի N 01

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ 2021Թ –Ի ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

2. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

3. 2021Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

4. 2021Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

5. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

6. 2021Թ. ՀԱՄԱՐ «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի ֆինանսների և գանձումների բաժնի պետ Հ. Պողոսյանը/

7. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ 2021Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Հ. Պողոսյանը/

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 7 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

9. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՄԱՐՏԻ 22-Ի ԹԻՎ 19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ.Դավթյանը/

10. Ք. ԱՐԱՐԱՏ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ԶԱՆԳՎԱԾ 14 ՇԵՆՔԻ ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

11. Ք. ԱՐԱՐԱՏ, ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 2/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 26 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

12. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 12 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻՑ ՍԵՆՅԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

13. ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

14. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետի Հ. Դավթյանը /

15. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 03-002-0587-0007-հց) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,1338 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

16. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՋԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
<<14>> ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 02

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով և համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2021թ.-ին համայնքի ավագանու հերթական նիստերը հրավիրել՝

2021թ. հունվարի 20-ին
2021թ. մարտի 18-ին
2021թ. մայիսի 20-ին
2021թ. հուլիսի 20-ին
2021թ. սեպտեմբերի 22-ին
2021թ. նոյեմբերի 18-ին
2021թ. դեկտեմբերի 15-ին

2. Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրել ավագանու արտահերթ նիստ:

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | — | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՋԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 03

## ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու Կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈւՄ Է՝

Արարատ քաղաքային համայնքի ղեկավարի աշխատավարձը 2021թ. -ի համար սահմանել ամսական 324000 /երեք հարյուր քսանչորս հազար/ դրամ:

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՉ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 04

## 2021Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արարատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը 2021թ.-ի համար: /Հավելված 1, կցվում է/:

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հավելված N1

Հաստատված է համայնքի ավագանու
2021թ. հունվարի 14-ի թիվ 04 որոշմամբ

# ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2021թ.

*Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 54 հոգի*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀ հազ.դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 324,0 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1<br>1 | 247,0 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 2 | 207,0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 192,0 |
| Համայնքի ղեկավարի ռեֆերենտ | 1 | 108,0 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.1-1/ | 1 | 259,0 |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ | | |
| Բաժնի պետ /2.1-1/ | 1 | 233,0 |
| Բաժնի պետի տեղակալ /2.2-1/ | 1 | 210,0 |
| Գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 189,0 |
| Գլխավոր մասնագետ /2.3-2/ | 1 | 189,0 |
| Առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 170,0 |
| Առաջատար մասնագետ /3.1-2/ | 1 | 170,0 |
| 1-ին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 153,0 |
| 2-րդ կարգի մասնագետ / 3.3-1/ | 1 | 137,0 |
| **Ներքին աուդիտի բաժին** | | |
| Բաժնի պետ /2.1-3/ | 1 | 233,0 |
| Առաջատար մասնագետ-աուդիտոր /3.1-5/ | 1 | 170,0 |
| **Աշխատակազմ** | | |
| Գլխավոր մասնագետ /2.3-3/ | 1 | 189,0 |
| Գլխավոր մասնագետ /2.3-4/ | 1 | 189,0 |

| | | |
|---|---|---|
| Գլխավոր մասնագետ / 2.3-5/ | 1 | 189,0 |
| Գլխավոր մասնագետ /2.3-6/ | 1 | 189,0 |
| Առաջատար մասնագետ /3.1-3/ | 1 | 170,0 |
| 1-ին կարգի մասնագետ /3.2-2/ | 1 | 153,0 |
| 2-րդ կարգի մասնագետ /3.3-2/ | 1 | 137,0 |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | |
| Բաժնի պետ /1.3-1/ | 1 | 256,623 |
| Գլխավոր մասնագետ-ադմինիստրատոր. /2.3-7/ | 1 | 181,885 |
| Գլխավոր մասնագետ – գլխավոր հաշվապահ /2.3-8/ | 1 | 181,885 |
| Գլխավոր մասնագետ / 2.3-9/ | 1 | 181,885 |
| Առաջատար մասնագետ /3.1-4/ | 1 | 133,603 |
| ՔԿԱԳ ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | | |
| Բաժնի պետ /1.3-2/ | 1 | 256,623 |
| 1-ին կարգի մասնագետ /3.2-3/ | 1 | 133,603 |
| ՏԵԽՄԻՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Համակարգչային տեխնիկայի և ինտերնետ կապի սպասարկող | 1 | 132,0 |
| Քարտուղարուհի | 1 | 129,0 |
| Գործավար-օպերատոր | 4 | 91,276 |
| Տնտեսվար | 1 | 120,0 |
| Վարորդ | 1 | 180,0 |
| Հավաքարար | 1 | 89,102 |
| Հավաքարար | 1 | 91,276 |
| Բանվոր-փականագործ | 1 | 91,276 |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ | | |
| Հաշվապահ | 1 | 89,102 |
| Գանձապահ | 1 | 89,102 |
| Օպերատոր | 1 | 91,276 |
| Գանձող | 7<br>1 | 89,102<br>91,276 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 05

## 2021Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արարատի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը 2021թ.-ի համար: /Հավելված 1, կցվում է/:

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՅԱՆ

Հավելված N 1

Հաստատված է համայնքի ավագանու
2021թ. հունվարի 14-ի թիվ 05 որոշմամբ

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
# ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
# 2021թ.
# Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսատնտեսական և գանձումների բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանումներ

1. Սոցիալական աջակցության Արարատի տարածքային բաժին
2. ՔԿԱԳ Արարատի տարածքային բաժին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐ 2021 թվականի N 06-Ն

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 18-րդ հոդվածի 18-րդ, 38-րդ հոդվածի 2-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1. Արարատ քաղաքային համայնքում 2021թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝**

1.1 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների /այդ թվում՝ ոչ հիմնական/ շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները /բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինարարությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա. հիմնական օբյեկտների համար՝ մինչև 300մ$^2$ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի /այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200մ$^2$ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար – 15,0 հազ. դրամ, այլ օբյեկտների համար՝ 201մ$^2$ մինչև 500մ$^2$ - 30,0 հազ. դրամ

501 մ$^2$ մինչև 1000 մ$^2$ - 50,0 հազ. դրամ

1001մ$^2$ մինչև 3000 մ$^2$ - 50,0 հազ. դրամ

3001մ$^2$ և ավելի - 100,0հազ. դրամ

բ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար /մինչև 20 մ$^2$ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ/ - 3,0 հազ. դրամ, 20 մ$^2$ և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար - 5,0 հազ. դրամ:

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն - 3,0 հազ. դրամ:

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար - 5,0 հազ. դրամ:

1.4 Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել.

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 4500 դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 5500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 7000 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 10500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 13000 դրամ
- 501քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 23000 դրամ

1.5 Համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 3000դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 5500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 7000 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 10500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 13000 դրամ
- 501քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 23000 դրամ

1.6 Համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ՝ 1քմ-ի համար:

1.7 Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/ և խաղատներին ժամը $24^{00}$ -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել.

ա. առևտրի օբյեկտների համար - 25,0 հազ. դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50,0 հազ. դրամ,

գ. բաղնիքների /սաունաների/ համար - 200,0 հազ. դրամ,

դ. խաղատների կազմակերպման համար - 500,0 հազ. դրամ,

ե. շահումով խաղերի կազմակերպման համար – 250,0 հազ. դրամ,

զ. վիճակախաղերի կազմակերպման համար - 100,0 հազ. դրամ,

1.8 Համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 1,0 հազ. դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 1750 դրամ,

գ/ սոցիալական գովազդի համար - 0 դրամ

դ/ այլ արտաքին գովազդի համար - 750 դրամ;

ե/ դատարկ գովազդային վահանակների համար - 187,5 դրամ,

զ/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը - 75 դրամ:

1.9 Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվության համար/ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 5,0 հազ. դրամ՝ յուրաքանչյուր մեքենայի համար:

1.10 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 100,0 հազ. դրամ:

1.11 Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների, տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30,0 հազ. դրամ:

1.12 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի

մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրք օրացուցային տարվա համար սահմանել - 50,0 հազ. դրամ

1.13 Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում.

- մինչև 26քմ -ի դեպքում - 5000դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ դեպքում -5500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ-ի դեպքում – 10500 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ-ի դեպքում – 15500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ-ի դեպքում – 20500 դրամ
- 501քմ-ից ավելի դեպքում – 30500 դրամ

Ոչ հիմնական շինությունների ներսում.

- մինչև 26քմ -ի դեպքում - 1000դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ -ի դեպքում -1500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ-ի դեպքում – 2500 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ-ի դեպքում – 4500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ-ի դեպքում – 8500 դրամ
- 501քմ-ից ավելի դեպքում – 15500 դրամ

1.14 Համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 50,0 հազ. դրամ:

1.15 Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

**2. Արարատ քաղաքային համայնքում 2021թ համար սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝.**

2.1 Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 3000 դրամ,

2.2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 3000 դրամ

2.3. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել -5000 դրամ,

2.4. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 3000 դրամ,

2.5. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել – 190 դրամ՝ յուրաքանչյուր բնակչի համար,

2.6. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց 1մ$^2$ համար փախհատուցման վճար սահմանել - 10 դրամ,

**3. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.**

ա/ առևտրի, հանրային սննդի կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով 1մ$^2$ համար - 50 դրամ,
բ/ հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների /ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների/ հանգստյան տների, բազաների ու ճամբարներ, սպորտի նախատեսված շենքերի և շինությունների մասով 1մ$^2$ համար - 20դրամ,
գ/ վարչակառավարչական, ֆինանսական կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով 1մ$^2$ համար - 20 դրամ
դ/ գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով 1մ$^2$ համար - 3 դրամ
ե/ արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի, շինությունների մասով 1մ$^2$ համար - 5 դրամ
զ/ շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի , համաձայն սույն կետի ա/-ե/ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի ա/-ե/ կետերով սահմանված դրույքաչափով, է/ շինություններում /այդ թվում առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում/, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի ա/-ե/ կետերով սահմանված դրույքաչափով:

3.1 Շենքերի և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով 1մ$^2$ համար - 50 դրամ:

3.2 Շենքերի և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3.3 Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 3-րդ կետի ա/-ից և ե/ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1/ ըստ ծավալի 1մ³ աղբի համար -3000 դրամ կամ

2/ ըստ զանգվածի 1տ աղբի համար -10000 դրամ

3/ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի /կամ/ շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

**4. Համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝**

ա/ Արարատ քաղաքային համայնքում հաշվառված և առնվազն վերջին մեկ տարում համայնքում փաստացի բնակվող ընտանիքների երեխաների համար - 5000 (հինգ հազար) դրամ:

բ/ Արարատ քաղաքի հարակից համայնքների երեխաների համար՝ 22000 (քսաներկու հազար) դրամ:

**4.1** Համայնքի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

| | | |
|---|---|---|
| 1. Դաշնամուր և լարային գործիքներ | I – VII դասարանների համար | - 40000դրամ |
| | VIII - XI դասարանների համար | - 65000դրամ |
| 2. Ակորդեոնի բաժին | I – V դասարանների համար | - 25000դրամ |
| 3. Նկարչական բաժին | I -- V դասարանների համար | - 20000դրամ |
| 4. Պարի բաժին | | - 20000դրամ |
| 5. Քանոն՝ պետ.պատվերից դուրս սովորող երեխաների համար | | |
| | I -- V դասարանների համար | - 40000 դրամ |
| | VI -IX դասարանների համար | - 65000դրամ |

**4.2.** Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար սահմանել - 1000 դրամ

4.3. Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը.

ա/ կենդանիների հիվանդությունների բուժման կանխարգելման հարցերով խորհրդատվություն – 500 դրամ
բ/ ծննդօգնություն
գ/ թեթև միջամտություն - 1000 դրամ
դ/ ծանր միջամտություն - 5000 դրամ
ե/ վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունախում կամ այլ նմուշառում կախված կենդանատեսակներից / բացառությամբ «գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ - 100 դրամ /մանր կենդ/ -200 դրամ/խոշոր կենդ./
զ/ կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200 դրամ
է/ ախտահանություն - 1 մ$^2$ 200 դրամ
ը/ միջատազերծում /դեզինսեկցիա/ - 1 մ$^2$ 100 դրամ
թ/ կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ - 1 մ$^2$ 200դրամ
ժ/ արհեստական սերմնավորում - 5000 դրամ
ի/ կենդանու հերձում - 1000 դրամ/մանր կենդ./
3000 դրամ /խոշոր կենդ./

լ/ կենդանաբուժում /յուրաք. այցելություն/ - 1000 դրամ
խ/ կենդանիների նախասպանդային զննում - 1000 դրամ/մանր կենդ./
2000 դրամ /խոշոր կենդ./

ծ/ կենդանիների հետսպանդային զննում - 1000 դրամ/մանր կենդ./
2000 դրամ /խոշոր կենդ./

**Ծանոթություն.**
Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետը՝ սույն որոշման 1-ին կետի 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ, 1.8-րդ, 1.9-րդ , 1.10-րդ, 1.11-րդ, 1.14-րդ և 1.15-րդ ենթակետերով ընդունված դրույքաչափերի վրա կիրառվել է 0,5 գործակիցը:

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐ 2021 թվականի N 07

## 2021Թ. ՀԱՄԱՐ «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Արարատի քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2021թ.-ի համար: / Հավելված 1, կցվում է/:

| N | ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| 2. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 3. | ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ | | | |
| 5. | ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 6 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ | | | |
| 7. | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ | | | |
| 8. | ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՅԱՆ

Հավելված N1

Հաստատված է համայնքի ավագանու 2021թ. հունվարի 14-ի թիվ 07 որոշմամբ

«ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2021թ.

| Հ/Հ | ՊԱՇՏՈՆԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀդրամ) I կիսամյակ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀդրամ) II կիսամյակ | ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ՀՀդրամ) I կիսամյակ | ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ՀՀդրամ) II կիսամյակ | ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Տնօրեն | 1 | 220000 | 220000 | 1320000 | 1320000 | 2640000 |
| 2 | Ինժեներ-մեխանիկ | 1 | 210000 | 210000 | 1260000 | 1260000 | 2520000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 170000 | 170000 | 1020000 | 1020000 | 2040000 |
| 4 | Տնօրենի օգնական | 1 | 140000 | 140000 | 840000 | 840000 | 1680000 |
| 5 | Կաղրերի գծով քարտուղար | 1 | 110000 | 110000 | 660000 | 660000 | 1320000 |
| 6 | Գործավար | 1 | 96000 | 96000 | 576000 | 576000 | 1152000 |
| 7 | Բրիգադիրներ | 2 | 178204 | 178204 | 1069224 | 1069224 | 2138448 |
| 8 | Էլեկտրիկ | 1 | 110000 | 110000 | 660000 | 660000 | 1320000 |
| 9 | Զոդող- վարպետ | 1 | 150000 | 150000 | 900000 | 900000 | 1800000 |
| 10 | Վարպետ կոյուղու | 1 | 200000 | 200000 | 1200000 | 1200000 | 2400000 |
| 11 | Վարպետ | 1 | 89102 | 89102 | 534612 | 534612 | 1069224 |
| 12 | Վարորդ աղբատար մեքենայի | 1 | 160000 | 160000 | 960000 | 960000 | 1920000 |
| 13 | Վարորդ մեխանիզատոր | 1 | 150000 | 150000 | 900000 | 900000 | 1800000 |
| 14 | Վարորդ ԳԱԶ ավտոմեքենայի | 2 | 300000 | 300000 | 1800000 | 1800000 | 3600000 |
| 15 | Վարորդ ԶԻԼ ավտոմեքենայի | 1 | 150000 | 150000 | 900000 | 900000 | 1800000 |
| 16 | Վարորդ ջրցանի | 1 | 150000 | 150000 | 900000 | 900000 | 1800000 |
| 17 | Վարորդ գազելի | 1 | 120000 | 120000 | 720000 | 720000 | 1440000 |
| 18 | Բանվոր աղբաթափի | 9 | 1440000 | 1440000 | 8640000 | 8640000 | 17280000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Հավաքարար գրասենյակի | 1 | 91276 | 91276 | 547656 | 547656 | 1095312 |
| 20 | Հավաքարար | 4 | 365104 | 365104 | 2190624 | 2190624 | 4381248 |
| 21 | Հավաքարար | 28 | 2494856 | 2494856 | 14969136 | 14969136 | 29938272 |
| 22 | Կանաչապատման բանվոր 8 (ամիս) | 6 | 570000 | 570000 | 2280000 | 2280000 | 4560000 |
| 23 | Ջրբաժան (8 ամիս) | 1 | 95000 | 95000 | 380000 | 380000 | 760000 |
| 24 | Բանվոր /այգու/ | 1 | 95000 | 95000 | 570000 | 570000 | 1140000 |
| 25 | Փականագործ | 1 | 89102 | 89102 | 534612 | 534612 | 1069224 |
| 26 | Փականագործ ավտոմեքենայի | 1 | 95000 | 95000 | 570000 | 570000 | 1140000 |
| 27 | Դռնապան | 1 | 89102 | 89102 | 534612 | 534612 | 1069224 |
| 28 | Պահեստապետ | 1 | 95000 | 95000 | 570000 | 570000 | 1140000 |
| 29 | Հյուսն | 1 | 89102 | 89102 | 534612 | 534612 | 1069224 |
| 30 | Որմնադիր | 1 | 110000 | 110000 | 660000 | 660000 | 1320000 |
| 31 | Վարպետ (տանիք վերանորոգող) | 1 | 89102 | 89102 | 534612 | 534612 | 1069224 |
| 32 | Աղբավայրի պահակ | 1 | 91276 | 91276 | 547656 | 547656 | 1095312 |
| 33 | Աղբավայրի պահակ | 2 | 178204 | 178204 | 1069224 | 1069224 | 2138448 |
| 34 | Բանվոր /այլընտրանքային ծառայող/ Ծանոթություն՝ դրամական բավարարումը կատարվում է պետբյուջեից ամսական 30000 ՀՀ դրամ | 1 | | | | | |
| Ընդամենը | | 80 | 8780430 | 8780430 | 51352580 | 51352580 | 102705160 |

2021թ.տոնական և հիշատակի օրերի համար վճարվող գումարը կազմում է՝ 2.000.0 դրամ:

Դրոշմանիշային վճարը կազմում է՝ 199.0 հազ.դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /060/88-55-55, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> ՀՈՒՆՎԱՐ 2021 թվականի N 08

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ 2021Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԻՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

